ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(«ՔԾՓԿ» ԲԲԸ)

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԻՑԵՆԶԻԱ 13527

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՔԱՂ.ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ, ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 07-003-0025-0003-001 ԿԱԴԱՍՏԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՏԵՂԱԿԱՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՀԻՄՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան - 2022

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N Ա-860/22
«27» 04 2022 թ.

«Հաստատում եմ»
«ՔԾՓԿ ԲԲԸ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն՝
Ա.Գյուլխասյան
«22» 04 2022թ.

«ՔԾՓԿ» ԲԲԸ
ելք 13/36
«22» 04 2022 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզ, քաղ.Բյուրեղավան, Բյուրեղավան համայնքի 07-003-0025-0003-001 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված կիսակառույց մարզական համալիրի պահպանված հիմքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ

Աշխատանքը կատարվել է Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի առ 20.04.2022թ. դիմում-գրության համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված կիսակառույց մարզական համալիրի պահպանված հիմքերի դիտագործիքային ուսումնասիրություն:

Հետազննությունը իրականացվել է «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04- «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20.06-2014 նորմերի և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վերականգնման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ»-ի համաձայն:

Հիմքերի բետոնի փաստացի ամրությունները որոշվել են ընտրանքային մոտեցմամբ, չքայքայող եղանակով Original Shmidt տեսակի ստուգաչափով (գործարանային N176501), ԳՈՍ 22690-88 «Բետոններ, Ամրության որոշում չքայքայող մեխանիկական մեթոդով» ՀՀ ազգային ստանդարտի պահանջներին համապատասխան:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող մասնաշենքի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը A_{max}=0,4g (ՀՀՇՆ 20.04- ըստ հավելվածաս 1-ի):

Դիտարկվող հիմքերը իրականացվել են 1980-ական թվականների սկզբում, հատակագծում քարակուսիաձևին մոտ ուրվագծով ~30,5x30,5մ արտաքին եզրաչափերով, միահարկ մարզական համալիրի համար:

2000-ական թվականների սկզբում կիսակառույց մարզական համալիրի կարկասը ապամոնտաժվել է:

Զննվող հիմքերը կազմված են միաձույլ բետոնե ժապավեններով ու համակցված խամքարաբետոնե պատերով և առանձին տեղակայված միաձույլ երկաթբետոնե սյունակալներով (նկ.1):

Նկ. 1 Կիսակառույց մարզական համալիրի պահպանված հիմքերի տեսքը

Հիմնային ժապավենները ու պատերը ունեն մինչև 50սմ լայնություն և իրականացված են մինչև 170սմ բարձրություն:

Զննմամբ պարզվեց հետևյալը՝

- Միաձույլ երկաթբետոնե սյունակալները միմյանց հետ կապված չեն պահանգներով:
- Հիմքերը և պատերը երկարատև ժամանակ գտնվելով բարձիթողի վիճակում ստացել են հետևյալ վանսվածքներ՝
  - Կան պատերի քանդված առանձին տեղամասեր (նկ.2):
  - Հիմնային ժապավենները ու պատերը ունեն խիստ քայքայված բազմաթիվ տեղամասեր (նկ.3):
  - Հիմնային ժապավեններում ու համակցված պատերում առաջացել են միջանցիկ ճաքեր մինչև 2մմ բացվածքով (նկ.4):
  - Հիմնային ժապավենների ու համակցված պատերի բետոնի փաստացի ամրությունը կազմում է 7-10ՄՊա:

Նկ. 2

Նկ. 2 Պատերի վնասվածքների տեսքը

Նկ.3

Նկ. 3 Հիմնային ժապավենների և պատերի

վնասվածքները

Նկ.4

Նկ. 4 Հիմնային ժապավեններում և պատերում առկա

ճաքերը

Ելնելով հետազննության արդյունքներից կիսակառույց մարզական համալիրի պահպանված հիմքերի ու համակցված պատերի տեխնիկական վիճակը գնահատվում է խիստ անբավարար ու վթարային, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող ՀՀՇՆ 20.04- նորմերի ու հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 4-րդ աստիճանի:

Հաշվի առնելով վերը նշվածը եզրակացվում է՝

- ✓ ՀՀ Կոտայքի մարզի, քաղ.Բյուրեղավան, Բյուրեղավան համայնքի 07-003-0025-0003-001 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված, նախկինում ապամոնտաժված կիսակառույց համալիրի, առկա պահպանված հիմքերը ենթակա են ապամոնտաժմանը:

Լաբորատորիայի վարիչ՝ **Ռ.Խաչատրյան**

Ճարտարագետ՝ **Մ.Հարությունյան**

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ